



Հրատարակի ամսոյն 8րէն Լ22րէն
Ստորագրութեան արէշէ Եւրէ-
լայն աշխատի թիւն 5

Տարեկան գին Կաշիկի 2 րէ 100
Դրոշմերէն Բաժանորդ Եւրոշի-
րէ Ժողովոյն Ծախսը Զմարեւոն էն:

ՈՒՍՈՒՄՆ ԷՆԴԵՏԵՍԵՆՈՐԵԱՅ

22 ՄԱՐՏ Ա.ՏԱՐԻ 1861 ԹԻՒ 14

Ե.Յ.Գ

Քարեւործական ընկերութեան Տնօրէն Ժողովը պատիւ ունի ծա-
նուցանելու բաժանորդացը լրութեանը, որ առաջիկայ ապրիլի 9^{ին} կի-
րակի օրը արտաքույ կարգի ընդհանուր ժողով պիտի գումարուի: Սոյն
ընդհանուր ժողովին քննութեանը պիտի յանձնէ Տնօրէն Ժողովը իր
պատրաստած հիմնադիւր, ընկերութեանը շուտով ու ապահով կերպով
իր նպատակին հասնելու միջոցներուն վրայ. ուստի կը խնդրէ բոլոր բա-
ժանորդներէն որ հաճին նոյն օրը անպատճառ ներկայ դանուիլ Հա-
մազդեաց ընկերութեան ընթերցարանը 1 լաշ փողոցը թիւ 12 ի Քե-
րա, ժամ 6էն մինչև 7:

Կ. Պօլիս
1861 Մարտ 21.

Ի Դիմաց Տնօրէն Ժողովոյ
Գ. Աշխատի

ՏԵՍ ԹԻՒ 10.

Աս կերպով Վաթէլընդհանուր ազգաց
պարտաւորիչ օրէնքը դնելէն ետքը, զոր
Հարկաւոր օրէնք կը կոչէ, ուրիշ երկու բա-
ժանում ալ կ'ընէ, այսինքն՝ Դաշանց օրէնք,
որնոր մասնաւոր Տէրութեանց իրարու
հետ ըրած դաշինքներէն յառաջ կուգայ,
ու միայն դաշինքի կողմերը կը պարտա-
ւորէ, և Սովորութեան օրէնք՝ որն որ մաս-
նաւոր Տէրութեանց մէջ եղած սովորու-
թիւններէն կը ծագի. և ասոր ալ միայն
լուեւայն հաւանութիւն տուող տէրու-
թիւնները կը պարտաւորին: Այս ըստ
Վաթէլի Ազգաց դրական օրէնքը համայն-
ազգային իրաւանց կամ Ազգաց իրաւուն-

քին սա երեք տեսակներէն, այսինքն՝ Հարկա-
ւոր, Դաշանց ու Սովորութեան օրէնքներէն կը
բաղկանայ:

Աւելորդ է ըսել թէ, Վաթէլին ազգաց
իրաւունքին աս բաժանումը շփոթ է, և
աս շփոթութիւնը դիւրաւ կը վերնայ,
երբոր « կամաւոր » (վօլնթէր) իրաւունք
ազգաց ըսածն իբր պէտք առնենք, որով
ազգերու իրարու հետ վարմանց համար
դրուած բոլոր օրէնքները կ'ըմանցուն. եւ
ետքը սեւը երկու պէսակի բաժնելով, մէ-
կուն « Պայմանագրական » (գոնվանտիոնէլ)
օրէնք, մէկաւր « Սովորութեան » օրէնք անուն-
ները տանք: Առջինը ազգաց մէջ դաշնա-
դրութիւններով եղած օրէնքները կընշանակէ,
երկրորդը՝ լուեւայն հաւանութեամբ մտած կամ
սովորութեամբ եղած օրէնքները կը ցուցնէ:

Հէֆթէր, նոր և անուանի Գերմանացի
Իրաւագէտը կ'ըսէ թէ, Ազգաց իրա-
ւունքին Հեղինակը Հռոմայեցի իրա-
ւագէտներն եղան, ինչպէս սր Ազգաց ի-
րաւունքը (բրո-ս փէ Ժան) բաւերը 1 ատի-
ներէն Եր-ս ճէնյի-Տ բաւերուն թարգ-
մանութիւնն են: Հռոմայեցիք, կ'ըսէ,
Ազգաց իրաւունքը ըսելով երկու բան կ'ի-
մանային. նախ առհասարակ մարդկային
իրաւունքը, և ան առանձին յարաբերու-
թիւնները զորոնք Տէրութիւններն իրենց
իշխանութեանը հպատակ չեղող անհատ-
ներու համար ալ կ'ընդունին ու կը ճանչ-
նան: Երկրորդ՝ ան ուղղակի յարաբերու-
թիւնները՝ որոնք նոյն իսկ Տէրութեանց
մէջ կան: Բայց նոր ազգերու մէջ, կ'ը-
սէ, Ազգաց իրաւունքը ըսելով՝ կ'իմացուին,
յառկապէս Տէրութեանց իրարու հետ
վարուելու կանոնները, որոնք Արտաքին հը-
րապարակական իրաւունքը (բրո-ս փէ-պլէ-
է-սի-է-րն) ալ ըսուեցան, զանազանելու հա-
մար իւրաքանչիւր Տէրութեան քաղաքա-
յին օրէնքէն՝ որն որ Ներքին հրապարակա-
կան իրաւունքը (բրո-ս փէ-պլէ-է-սի-է-րն) կը
կոչուի: Իսկ Հռոմայեցւոց Եր-ս ճէնյի-Տ-ին,
ազգաց իրաւունքին, առաջին նշանա-
կութիւնը, այսինքն այլ և այլ Տէրութե-
հպատակներու իրարու հետ ունեցած յա-
րաբերութեան կանոնները, բաւական ժամա-
նակ իւրաքանչիւր Տէրութեան ներքին օ-
րէնքներուն հետ խառն մնացին, մինչև
որ նոր առեւտրային իրաւունքին աս մասն
ալ բաժնուելով, զատ ճիւղ մը կազմուե-
ցաւ որն որ հիմա Առանձնական* (էրի-վէ)
իրաւունք ազգաց կը կոչուի: Իսկ ազգաց
օրէնքներուն օրինաւոր ու պարտաւորիչ
սկզբանը վրայ Հէֆթէր սա գաղափարը
կուտայ: Օրէնքը, կ'ըսէ, ընդհանրապէս
մարդու՝ իբր բարոյական անձ՝ արտաքին
ազատութիւնն է. և աս ազատութեան
օրէնքը՝ կամ գերագոյն հեղինակութեան
մը ձեռքով կը հաստատուի ու կը պաշտ-
պանուի, և կամ մարդ ինք պաշտպանելու
իրաւունք կ'ունենայ: Ազգերու իրաւուն-
քը, կ'ըսէ, աս վերջին տեսակէն է: Ինդ-

հանուր ազգաց ընկերութեանը մէջ ամեն
ազգ ընդհանուր պարտաւորիչ հասարա-
կաց օրէնք մը ճանչնալու և անիկա պաշտ-
պանելու կը ստիպուի. և չկրնար ան օ-
րէնքը բռնաբարել կամ եղծանել առանց
զինք միւս ազգերուն թշնամութեանը են-
թակայ ընելու, և իր գոյութիւնը կորսն-
ցնելու վտանգին մէջ իյնալու: Այլ ա-
սոր հակառակ սա համոզմամբ թէ ուրիշ
ազգեր իրեն նկատմամբ ան օրէնքը պիտի
պահեն, ինք ալ անոնք պահելու կը յօ-
ժարի: Աւերմն ազգաց իրաւունքը փո-
խադարձ պահպանութեան վրայ կը կայա-
նայ: Ան օրէնքը ոչ օրէնսդիր, ոչ ալ դա-
տաւոր ունի. ըստ որում անկախ Տէրու-
թիւններ իրենց վրայ գերագոյն մարդկա-
յին հեղինակութիւն չեն ճանչնար, եւ
չեն կրնար ալ ճանչնալ մինչև որ բոլոր ազ-
գերը կամ Տէրութիւնները մէկ տէրու-
թիւն չըլլան: Բայց հիմա ազգերու վար-
մանցը պատգամ ու կանոն միակ հասա-
րակաց կարծիքն է. անոր գերագոյն առ-
եանը պատմութիւնն է, որն որ արդարու-
թեան պատուար ու միանգամայն անի-
րաւութիւնը պատժող՝ Աեմսիս* է:
Ազգաց օրէնքներուն օրինաւորութիւնը
կամ բոլոր մարդկութեան անիկա յարգե-
լու պարտաւորութիւնը կը ծագի տիե-
զերաց բարոյական կարգաւորութենէն
որնոր չուզեր որ ազգեր ու անհատներ
իրարմէ անջատեալ մնան, այլ կը պա-
հանջէ որ մարդկային ազգին բոլոր ընտա-
նիքը մէկ մեծ ներդաշնակաւոր ընկերու-
թեան մը պէս միացած ըլլայ:

Աս իրաւագէտներուն կարծիքը ըսելէ
ետքը, հիմա ազգաց իրաւունքին ծագմանն
ու օրինաւոր և պարտաւորիչ սկզբանն
ինչ բանի վրայ կայացած ըլլալն ըսենք:
Ինչպէս տեսանք Գրովտիոս և անոր հե-
տեւելով ոմանք, Ազգաց իրաւունքին ծա-
գումն ու օրինաւոր ու պարտաւորիչ ըս-
կըզբունքը մարդոց սրտերուն մէջ գըր-
ուած ու խղճմանքին ձայնով անոնց խօ-

*Աս բաժանումներուն վրայ մենք արդէն խօսեցանք.
բայց սեղ մը սխալմամբ Առանձնական ըսելու տեղ՝ ներ-
քին իրաւունք ըսուած է:

*Աեմսիս, ըստ գիցարանութեան՝ դուստր Արամաղայ
Հարչաւորութեան, կամ Ովկիանու և գիշերոյ Աբեթ լնդրու-
թեան և չարի փոխանակ չար հատուցանելու Աստուա-
ծուհի էր: Պաշտօնը՝ յանցանք ու անեղէն յաջողու-
թիւն պատժել էր:

բարոս ազգաց մէջ, այլ և նոյն իսկ Եւրոպական ազգաց մէջ արդի լուսաւորութիւն ու բաղաբակրթութիւնը վերջին յիսուն տարուան միջոցին մէջ, մարդասիրական սկզբանց իբր հակառակ, փոխեց կամեղանակաւորեց անանկ օրէնքներ՝ որոնք արդարութեան սկզբանց համաձայն կարծուած էին, և նորէն ընդունեցաւ անանկ օրէնքներ՝ որոնց մարդկային ընկերութեան երջանկութեանն ու յառաջագիւծութեանը նպաստող ըլլալը բնաւ ճանչցուած չէին: Այսպէս են կրօնականադատութեան, ոչ միջամտութեան, չէզոք վաճառականութեան, գերեզմանութեան համար եղած օրէնքները, զորոնք իրենց տեղը պիտի տեսնենք: Ուստի Մոնթէսքիէօ Ոգի օրինաց կոչուած գրքին մէջ կ'ըսէ. «Ամեն ազգ ազգաց օրէնքներ ունի. պատերազմի մէջ իր բռնած գերիներն ուսող իրօքէզներն անգամ օրէնք մ'ունին: Դեռ պաններ կը զըկեն ու կ'ընդունին. պատերազմի ու խաղաղութեան օրէնքներ կը ճանչնան. բայց գէշը սա է որ անոնց օրէնքները ճշմարտ սկզբանց վրայ հիմնուած չեն»: Պինքերշուք աւելի գեղեցիկ կ'ըսէ. «Ազգաց օրէնքները բանականութեան լուսոյն համեմատ կը պահուին եթէ ոչ ամեն ազգերու, դեթ անոնց մեծագոյն մասին մէջ, և մանաւանդ ամենէն լուսաւորեալներուն մէջ»:

Վիտողութեան արժանի է որ Եւրոպայի և Ամերիկայի Բրիտոնեայ ազգաց ու Ասիայ և Ալիքիէի Մահմետական և հեթանոս ազգաց մէջ սկսուած նորագոյն յարաբերութիւնները՝ վերջիններուն կողմէն իրենց մասնաւոր ազգային սովորութիւնները ձգելով լուսաւորեալ Բրիտոնեայ աշխարհին սկզբունքներն ընդունելու պատրաստութիւն մը կը ցուցնեն: Դեռ պանութեան իրաւունքը ճանչցուեցաւ ու փոփոխակի տարածուեցաւ Տաճկաստանի, Պարսից, Եգիպտոսի ու Պարսկաստանի ազգերուն, և վերջին տարիներս Չինաց ու Ճափոնի տէրութեանց մէջ: Օսմանեան կայսրութեան անկախութիւնն ու ամբողջութիւնն արդէն Եւրոպական հաւասարակշիւութեան իբրեւական տարրը ճանչցուած ու ընդունուած էր. վերջին ա-

րեւելեան Պատերազմէն հետէ նոյն խնդիրը Եւրոպայի Բրիտոնեայ տէրութեանց ու յիշեալ կայսրութեան մէջտեղը դաշնադրութեան պայմաններով հաստատուեցաւ. անանկ որ աս քայլով Օսմանեան կառավարութիւնը Բրիտոնեայ աշխարհին հասարակաց իրաւանց շրջանին մէջ մտած կը համարուի:

Շարունակելի

ԴԱՍՏԻՍԱԿՈՒԹԻՒՆ

Տէր Թիւ 9.

Մարդկային մարմնոյն ներքին կազմուածքն ալ կը ցուցնէ թէ մարդկային ազգին տեսակը մի է: Այլ և այլ տեսակներ ըլլալն ապացուցանելու համար, հարկաւոր է ցուցնել թէ մարմնոյ էական մասերուն թիւն՝ ամենուն մէջ մի և նոյն չէ. թէ՛ Եւրոպական ցեղն, օրինակի համար, անանկ մասեր ունի զոր Սեւ չունի: Եթէ մէկը կարող ըլլայ ապացուցանել թէ Եւրոպական ցեղին ըղեղին մէկ մասը Սեւերուն վրայ պակաս է, ցուցուցած կ'ըլլայ թէ այլ և այլ տեսակներ կան: Սփուրցհայմ կ'ըսէ թէ քանի որ Միացեալ Նահանգաց մէջ եմ, կը յուսամ թէ կարող պիտի ըլլամ Սեւերուն (Ամերիկայի վայրենիներուն) ըղեղը քննել, և հաւաստել թէ մի և նոյն էական մասերն անոնց վրայ ալ կան, և թէ՛ եղած տարբերութիւնն ալ այնպէս և այնչափ է, ինչպէս և որչափ Սպիտակ ցեղին մէջ այլ և այլ անհատներու վրայ կը տեսնուի:

Մարդկային ազգին տեսակը մինակ մէկ ըլլալը կ'ապացուցուի ուրիշ ձեւնարկութեմ'ալ, որն որ մաքին դործողութեանցը վրայ կը կայանայ: Ամեն տեղ և ամեն տեղ զիտուած է թէ մարդու մաքին նախնական կարողութիւններէն յառաջ եկած ներդործութիւններն որչափ տարբեր ալ են, կարողութիւնները մի և նոյն են: Սեւերն ընդհանրապէս Եւրոպացիներէն ստորին են, բայց և այնպէս անոնց մէջ ալ երաժշտութեան, չափաբերութեան ու փիլիսոփայութեան մէջ գերազանցութիւն ունեցողներ կը գտնուին: Պըռմէնպախ և

մէկտեղ սերունդ յառաջ բերելու, կամ անոնց զաւակներուն դարձեալ ծնունդ ունենալու կարող ըլլալուն և չըլլալուն նայելով : Արդ որովհետեւ ասոր ալ փորձն եղած և ստուգուած է, ուրեմն կրնանք եզրակացնելով ըսել թէ Մարդկային ազգը մինակ մէկ տեսակ է :

Բայց և այնպէս պէտք է գիտնալ թէ, թէպէտ բնական պատմութիւնը մարդկային ազգին մինակ մէկ սկզբնական տեսակէ յառաջ եկած ըլլալուն կարելիութիւնը կրնայ ցուցնել, բայց աս բանին իրօք այնպէս եղած ըլլալը չկրնար ապացուցանել : Ճիշդ ինչպէս որ չկրնար հաւաստել թէ մարդուս սկզբնական գոյնը սև թէ սպիտակ էր, կամ թէ արդեօք ՚ի սկզբան իւրաքանչիւր տեսակի անասուններէ մէյմէկ թէ երկերկու զոյգ ստեղծուեցան :

Մենք մեր հետեւեալ խորհրդածութիւններուն մէջ իբր ապացուցուած կ'ենթադրենք թէ մարդկային ազգը, թէպէտ այլ և այլ ցեղեր կը պարունակէ, սակայն մօքի և մարմնոյ մի և նոյն նախնական կարողութիւններով զարդարուած մինակ մէկ տեսակ է : Բայց և այնպէս, ինչպէս որ հռոմուսեան զգայութիւնը, հաւատարմութիւնը կամ քաջասրտութիւնը և ուրիշ յատկութիւններ ամեն մէկ շան, կամ ան ամեն մէկ տեսակի վրայ միօրինակ չեն, ասանկ ալ այս կամ այն ինչ կարողութիւնը մէկ մարդու կամ մէկ ցեղի վրայ աւելի գործունեայ կամ անգործ կրնայ ըլլալ քան թէ ուրիշի մը վրայ, թէպէտ երկու անհատը, կամ երկու ցեղն ալ էականապէս մի և նոյն տեսակէ է :

Մարդկային ցեղերուն պատմութեանը նկատմամբ գիտնական խուզարկութեանց միջոցով մինչև հիմա ճանչցուած ստոյգ ծանօթութիւնները զատ յօդուածով մը մեր ընթերցողներուն կը հաղորդենք :

ԳՐԱՏՈՒՆ

Տէս Թիւ 15

Իննթադրուի թէ Երուսաղէմի Տաճարին մէջ մատեններու հաւաքածոյ մը կը պահուէր. և Հրէից մատենագիրները բազ-

մաթիւ գրոց յիշատակութիւն կ'ընեն :

Եւ զգրասայ Ե. Զ. գլուխներուն մէջ կը պատմուի թէ Դարեհի հրամանաւ Երուսաղէմի տաճարին շինութեանը համար Կիւրոսի տուած հրամանը «Բաբելոնի դիւանին մէջ ուր գանձերը կը պահուէին» փնտռուեցաւ : Բայց յիշեալ հրամանը պարունակող տոմար Մարաց Եկեատանայ պալատին մէջ գտնուեցաւ : Բայց ատ վրէպութիւնը Բաբելոն կամ Եկեատան Պարսից վերաբերեալ մատենագրարան մը եղած ըլլալը չի ցուցնել, անկէ սա չափ միայն կը հասկըցուի թէ տէրութիւնը պաշտօնական գրութեանց համար դիւան մը ունէր :

Պիսիստրատոս Աթէնքի մէջ շինեց հըրապարակական մատենադարան մը, որն որ Բսերքսէսի ժամանակը Պարսկաստան տարուեցաւ, յետոյ Սելևկոս Կիկանովրի ժամանակ դարձեալ ետ բերուեցաւ, Սիդա աւարի առաւ, ու Արքիանոս վերջապէս հաստատեց : Ստրաբոն ու Պլուտարքոս կը պատմեն թէ Ատտաղոսի որդին Եւմենէս Պերգամոնի մէջ 200,000 հատորէ բաղկացեալ մատենադարան մը շինեց. և Պլուտարքոս կ'ըսէ թէ Մարկոս Անտոնինոս մատենադարանը Կղէպատրայի տուած ըլլալուն համար՝ Կեսարի կուսակիցը Կալվիստոս անոր դէմ ամբաստանութիւն ըրաւ :

Հաս հեղինակներ Յունաց գրատուններուն վրայով գրեցին, և այլ և այլ կարծիքներ երևան ելան թէ արդեօք հին պատմիչներուն մնացորդները տակաւին կրնան գտնուիլ, և թէ անոնք ուր փնտռուելու ենք :

Ուստի անունով Անդրիացին վերջին տեսներս աս խնդիրը նորէն յարուց, և սա դիտողութիւններն ըրած է :

«Յունաստանի մէջ 1256 ին Թուրքերուն գործածած Պոտայի գրատան համար մեծամեծ ծախքերով շատ ձեռագիր մատեններ հաւաքուած ըլլալը չենք կրնար առանց յիշատակութեան թողուլ : Աղբասանդ : Բրասիկանոս չիւպերեաններուն բոլորը հանդերձ մեկնութիւններով, Յոյն Հարց գործքերուն ու դասական կամ ընտիր մատենագիրներուն մեծ մասը հոն տեսած էր : Պոլիբիոսի հատակոտորներն ու Դիոդորոսի Սիկիւացոյն գործքերն ան

ՄԱՐԿԱՆԻՆԻ ՍՈՒՆԿԻՆ

Ահա ցուրտ օրեր եկաւ ու հասաւ
Այգի պարտեզներ բոլորն ալ չորցաւ .
Ահա թառամեալ վարդին տերեւներ
Գլորւանին ծածկէ գետնին են ինկեր .
Ահա ներդաշնակը թռչնոց երգեցիկ
Թողուցին նարկիզ շուան գեղեցիկ .
Ձրգեցին լեռները դաշտեր ծաղկաւէտ ,
Իրագեցին գացին ծածկեցան անհետ :
Լոկ կարօտակէզ գեղեցիկ սոխակի
Ահա դառնաղէտ ցաւօք կը լընուի :
Գեռնաւ ցրտապէս օրերուն աշնան .
Կայներ յուսահատ ինչորէր պատասխան .
«Ո՛ր էն» կը կանչէ , «Ո՛ր էքնալ գարուն ,
Ո՛ր կանանկապէղ օրերը սիրուն .
Ո՛ր էն գեղեցիկ ծաղիկներ այնքան
Որով հովիտներ դաշտեր պարծենան .
Ո՛ր սաղարթաւից ծառեր պտղաբեր
Որոնք երգեցինք միգօք կը լեցուէր ,
Որոնք լայնալիւր ճիւղ կամար կամար
Գործէին հանգիստ անցորդաց հազար .
Ո՛ր էն» կը կըրնէ , «այն անուշ հովեր
Որ բոլոր ախարհ կը զովացունէր .
Բնութեան փառաց թերթեր մատենին
Երջէ հեղափոխութիւն մեղմազին» .
Կարդային շքեղ աեսարան սիրուն
Գարնան օրերուն :
Ո՛ր էն ռօր գացին ռօ՛ր մընացին : «
Կ'երգէր վշտակ սոխակ տրտմազին .
«Ո՛ր այն բնութեան փառքերը բոլոր
Որոնց մէջ պանծայր վարդը փառաւոր
Վարդըս՝ զոր սրբամ հոծեմ օրն 'ի բուն .
'ի անոր ամեն մէկ կարմիր թերթերուն
Կարօտը քաշեմ արցունք կը թափեմ» . .
Ջայն այժմ 'ի գետին տեսնեմ համբուրեմ՝
Չի անգութ ձրմուսն ցուրտ ձեռքը նաւ
Եղովկ խաւարեց իմ վարդին արեւ : «
Կ'ըսէ և ամեն մէկ թերթին վերայ
Արցունք կը թափէ՝ կ'արտասուէ՝ կուլայ .
Սեւ աչքէն վազած ջրմ արցունքներուն
Ամեն մէկ կաթիլ վարդին թերթերուն
Իբրեւ վարդաղբ մը սեւ ու մըթին
Սէյմէկ գերեզման եղան ծածկեցին :
Այսպէս սրտաբէկ սոխակ դառնաղէտ
Անդադար երգէր կրկնէր զեւր աղէտ
«Թէ քանի յիշեմ վարդըս սիրական՝
Ցաւալի վերքեր սրտիս կը շառնան .
Ջայն էր մըթիթար իմ անձիս միակ .
Ո՛ր ի՞նչ անցաւոր է կենցաղոյս փառք . . .
Եղովկ ի՞նչ կանուխ բացուեցաւ չորցաւ .
Աւաղ չըտեսայ մատաղ թառմեցաւ .
Ահ քանի միտքս զանկայ բերեմ՝
Կարեւր բան չէ որ ես համբերեմ : «
Բաւա ու դարձեալ «ա՛հ» ըրաւ լացաւ .
Ո՛հ . . . ի՞նչ . . . սոխակին կեանքն ալ վերջացաւ :

Երազ է ամեն ինչ որ կը տեսնանք .
Խարուսիկ կենաց չորայրիկ հոսանք .
Բույսէ, վարդեան, ժամ, տարիներ ու դար՝
Սահին սրտանան թռչնն անդադար :
Այսպէս մարդերու գայ կենաց դարուն ,
Փրթթի կը թառմի վարդեր կենցաղոյն :

*Այս բերթուածն Ազնուազարմ Հայուհոյ մը գրչին արդիւնքն էր լրջաբար յօժարութեամբ կը փութամբ 'ի լոյս բնծայել 'ի ինքնութիւն բոլոր Հայաստանից : Եւ որովհետեւ հոս Հեղինակին արժանաւոր գովեստը սաղով համեստութեանը դպչելէ կը վախճանք ուստի այդ պարտքը լրացնելն բանասէր ընթերցողաց կը թողուի :

Կանցնին այն օրեր ու կերթան անտես՝
Գեռ շատերն ըզվարդ ինչորէն աղեկիզ :
Գեռ կ'երթան, պարտեզ տեսնել ծառ ծաղիկ ,
Վարդից բողբոջմունք թռչնոց դայլայիկ ,
Գեռ և ըս կարծեն թ'անոնք չեն ունայն ,
Թէ չեն թառամիր մընան յաւիտեան .
Գեռ և ըս երգոյ ու նրագաց ձայն՝
Անոնց լրեւեացն է անմահական .
Գեռ և ըս կարծեն թ'անցաւոր փառաց
Սնան է իրենց ձեռք՝ ունին միշտ անանց :
Գեռ խաբուած կարծեն թէ օրեր մարդկան
Կուգայ կ'ըսպասէ մինչ երբ կամենան .
Հազար ու անթիւ փորձեր նորենոր
Չեն ազդեր բնաւ այն սրտերուն՝ որ
«Ի ծոց ծնողաց ծըլիւր ու ծաղիկի
Աշխարհիս բարիք դեռ շատ վայելիւր »
Կըսեն ամբարշտ կուտան պատասխան .
Վա՛հ անբիշ փառացն համեստութեան
Սիրտ որ անըզայ բարեաց երկնային
Պարտիք և օրէնք չէք անըզամին .
Թէ «Չ'նչ հարկ ըսե՛լ ի՞նչ ազատագար
«Կեցցուք յաշխարհի՛ սիրեցցուք գաշխարհ : «
Երբոր բիւրաւոր փորձով կը տեսնայ
Թէ ճամբիս փառք մեզ լոկ Աստուած կայ :
Սուտ է ամեն բան կ'անցանէ բոլոր ,
Մեր գործքեր ջցնեն մեզի ամեն օր .
Ծընինք երախայ կ'ըլլանք պատանի՝
Ծերութեան աւուրք կուգան ըզկընի .
Կենացն առաւօտ կերթայ կուգայ մութ ,
Կը լընէ զանի ժամանակն անգութ .
Կանցնի և անհետ կ'ըլլայ յիշատակ .
Չէ կայուն կենցաղ և ո՛չ նորա փառք .
Եւ օր մ՝ «պիտ» ըսենք թէ շատ հրճուեցայ ,
Բայց մանուկ էի աւաղ ծերացայ :

Յիշէ մէկ մը արդ
Միտքեր բեր՝ ո՛ր մարդ :
Թէ անցաւ օրեր կենցաղի բոլոր
Բեզի իրկիւնն եղաւ և այսօր
Անցաւ կերութեամբ պարերդ ու խաղեր ,
Կը լընեն մոռցայք՝ դադարին երգեր .
Թէ ունեցար փառք առաքինութեան՝
Նա ընդ քեզ անմահ մընայ յաւիտեան .
Մարդ թող ու ձրգէ այդ լայն ճանապարհ ,
Որ 'ի նեղն ըզքեզ տանի անդադար :
Հերիք այսօրուանը ձրգես վաղուան ,
Գուցէ թէ երկինք զայն քեզի չըտան :
Ի՛նչ վստահութիւն անհիմն անհաստատ
Ծերութեան աւուրք հասանել ազատ .
Ի՛նչպէս կը հաւատա թէ կեանքն ըզքեզ .
Անշուշտ ծերութեան տանի յասպարեզ ,
«Որ գուցէ յայնժամ համեստ հեղինութեամբ
Եւ դուք ալ կընէք «Թ» աշխարհս է ունայն : «
Գիտցի՛ր , սկզբունքներդ վերջ մ'ալ ունի
Որ յանակնալս քեզ պիտի հանի .
Այն օր՝ որուն մէջ համոզուիս գիտնաս .
Այն օրը անշուշտ ո՛չ պիտի տեսնաս՝
Որ սոխակին պէս կարօտը չառած՝
Սեւ գերեզմանին ցուրտ գիրին ես ինկած . . .
Հոն քովդ տեսնաս բաղձանացրդ վարդ՝
Որ է լոկ մարմնոյդ հաճոյքը և զարդ .
Հոն հեգնէ յայնժամ կորուստը վարդին
Որոյ տերեւներ յաւաւ կը թառմին .
Հոն կընէ յայնժամ «Թ» աշխարհ չէ ունայն ,
Հոն տուր արձագանք փառացի ընդունայն . . .

Ն. Պ. Տ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԻՔԻ ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆ
Ա. ՃԵՎԱԼԻԲԵԱՆ